ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՍՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՏՅՈՄ ԵԱՏՈՒՐՈՎ

Իր 60-ամյա հոբելյանին սովետների երկիրը աշխարհի առջև կանգնում է որպես միասնաբար կոմունիզմ կառուցող իրավահավասար հանրապետությունների համերաշխ ընտանիք։ Սովետական հասարակության սոցիալ-քաղաքական համախմբվածությունը միաձույլ է։ Մեր երկրի սոցիալիստական ազգերն ու ազգությունները՝ համախմբված միութենական պետության մեջ, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ պատմական կարճ ժամանակաշրջանում վերացրին տնտեսական և կուլտուրական հետամնացությունը և կառուցեցին զարգացած սոցիալիստական հասարակարգ։ «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ նշվում է. «Նոր, արդարացի աշխարհի համար համատեղ պայքարում առաջացան աշխատավոր մարդկանց մեծ եղբայրությունը, միասնական ընտանիքի զգացումը, ստեղծվեց ժողովուրդների լենինյան անխախտ բարեկամությունը՝ մասսաների ստեղծարար գործունեության անսպառ աղբյուրները»[1]։

Մեր երկիրը մարմնավորում է պատմության մեջ աննախադեպ՝ ազատ ժողովուրդների միասնության և բարեկամության հարաբերություններ։ Այդ բարեկամությունը սոցիալիզմի մեծագույն նվաճումներից է, սովետական հասարակության շարժիչ հզոր ուժը, ՍՍՀՄ-ի բոլոր ազգությունների աշխատավորության ստեղծարար գործունեության անսպառ աղբյուրը՝ հանուն ամենաազնիվ նպատակի՝ կոմունիզմի կառուցման[2]։

Մեր մեծ հայրենիքի ժողովուրդների բարեկամությունն ունի օբյեկտիվ նախադրյալներ. ժողովուրդների բարեկամության քաղաքական հիմքը կազմում է սովետական պետական հասարակարգը, որտեղ ապահովված է ժողովուրդների կատարյալ իրավահավասարությունը։ Նրա տնտեսական հիմքը տնտեսության սոցիալիստական սիստեմն է, որի շնորհիվ միութենական բոլոր հանրապետություններում ստեղծված է ժամանակակից արդյունաբերություն և մեքենայացված գյուղատնտեսություն։ Նրա հոգևոր հիմքն են ժողովրդական կրթության, գիտության, գրականության և արվեստի համընդհանուր ճանաչում գտած նվաճումները, իսկ գաղափարական հիմքը մարքս-լենինյան աշխարհայացքն է։ Ժողովուրդների բարեկամությունը խարսխված է սոցիալիստական ազգերի կամավոր և եղբայրական համագործակցության, իրավահավասարության, նպատակների ու շահերի ընդհանրության, կոմունիզմի գաղափարներին նվիրվածության վրա։

Ժողովուրդների բարեկամության շատ կարևոր նախադրյալներից է նաև սուբյեկտիվ գործոնը. դա բանվոր դասակարգի և նրա կուսակցության կազմակերպական ու դաստիարակչական գործունեությունն է՝ ժողովուրդների եղբայրական փոխհարաբերության ճանապարհին բոլոր խոչընդոտների հաղթահարման ուղղությամբ, աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակությունը, ազգերի և ազգությունների համագործակցության և փոխօգնության

---

[1] *«Սովետական Հայաստան», 21. II. 1982։*

[2] «Вопросы идеологической работы КПСС. Сборник документов. 1965—1973», М., 1973, с. 333.

պրակտիկան, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի վերածումը մարդկանց գիտակցության, վարվելաձևի և ապրելակերպի ակտիվ գործոնի։

ՍՍՀՄ կազմավորման 50-ամյա հոբելյանին նվիրված իր զեկուցման մեջ Լ. Ի. Բրեժնևը տվել է ժողովուրդների բարեկամության խոր բնութագիրը, նշելով, որ սովետական ժողովուրդների բարեկամությունը «մեր անգնահատելի նվաճումն է, սոցիալիզմի ամենանշանակալի և յուրաքանչյուր սովետական մարդու սրտի համար ամենաթանկ նվաճումներից մեկը»[3]։ Շեշտելով ժողովուրդների լենինյան բարեկամության անընդհատ աճող նշանակությունը, ՍՄԿԿ Կենտկոմը ՍՍՀՄ կազմավորման 50-րդ տարեդարձի մասին որոշման մեջ արձանագրել է. «Համաշխարհային պատմությունը դեռ երբեք չի տեսել տասնյակ ազգերի և ազգությունների փոխհարաբերություններում շահերի և նպատակների, կամքի և գործունեության այնպիսի անխախտ միասնություն, այնպիսի հոգեկան հարազատություն, վստահություն և փոխադարձ հոգատարություն, ինչպիսիք մշտապես արտահայտվում են մեր եղբայրական միությունում»[4]։

Ժողովուրդների բարեկամության հսկայական և անընդհատ աճող նշանակությունը իրենց ելույթներում մշտապես ընդգծում են հանրապետական կուսակցական կազմակերպությունների ղեկավարները։ «ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը,— նշել է Վրաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Է. Ա. Շևարդնաձեն,— արժանի և հավասար ազգերի բարեկամություն է։ Մեր Միությունում այն ամենից առաջ հիմնված է ռուս ժողովրդի ամրակցող դերի վրա։ Նրա հետ բարեկամությունը և եղբայրությունը մենք այսուհետև ևս պետք է աչքի լույսի պես պահպանենք։ Դրանում են տեսնում իրենց պարտքը Վրաստանի, եղբայրական բոլոր հանրապետությունների կոմունիստները»[5]։ Ղազախստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Դ. Ա. Կունաևը այսպես է գնահատել ժողովուրդների բարեկամության նշանակությունը. «Մեզանից՝ սովետական մարդկանցից յուրաքանչյուրը, չի պատկերացնում իրեն մեր միասնական ընտանիքից դուրս, որտեղ ամեն ոք ազատ է և հավասար, որտեղ առաջին տեղում միշտ եղել է, կա և կլինի ժողովուրդների բարեկամության լենինյան թևավորող զգացմունքը՝ աշխարհի ամենագործունյա և արդյունավետ ուժը, որն ընդունակ է իսկական հրաշքներ գործել»[6]։ Ելույթ ունենալով Հայկական ՍՍՀ-ի և Հայաստանի կոմկուսի կազմավորման 60-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը շեշտել է. «Իրականացել են հայ ժողովրդի վեհ ու նվիրական իղձերը՝ ապրել ուրիշ ժողովուրդների հետ մեծ բարեկամությամբ և նրանց հետ ընթանալ երջանկության ու բարգավաճման պայծառ ճանապարհով։ Եվ մեր ժողովուրդը, որն ահա արդեն ուղիղ վեց տասնամյակ զգում է եղբայրության իսկական բերկրանքը, միշտ, ինչպես արևի լույսը, թանկ կըգնահատի սովետների երկրի ժողովուրդների մեծ բարեկամությունը, Հոկտեմբերի, սովետական կարգերի ծնունդ հանդիսացող բարեկամությունը, մեր լենինյան կուսակցության կողմից, նրա ազգային քաղաքականությամբ մշտապես ամրապնդվող և խորացվող բարեկամությունը, որը մեր հայրենիքի հզորության անսպառ աղբյուրն է, կոմունիզմի ճանապարհին գալիք հաղթանակների երաշխիքը»[7]։

Բերված մտքերը ցայտուն արտահայտում են կոմունիստական կուսակցության վճռականությունը, երկրի բոլոր ազգերի և ազգությունների կամքը՝

---

3 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 4, Երևան, 1974, էջ 67։

4 «Вопросы идеологической работы КПСС. Сборник документов. 1965—1973», с. 339.

5 Э. А. Шеварднадзе, Советская Грузи, М., 1979, с. 103.

6 М. И. Куличенко, Укрепление интернационального единства советского общества, Киев, 1976, с. 331.

7 «Սովետական Հայաստան», 29. XI. 1980։

ժողովուրդների լենինյան բարեկամությունը ամրապնդելու ուղղությամբ։ Այդ բարեկամությունը որակական առանձնահատուկ երևույթ է ազգային հարաբերություններում, որը խորացվում է բովանդակությամբ և դրսևորման ձևով՝ պայմանավորված ազգերի, ազգությունների մերձեցման աստիճանով և հաջողություններով, նրանց համագործակցության և փոխօգնության արդյունքներով։

Սոցիալիզմի պայմաններում ժողովուրդների բարեկամությունը դարձել է ազգային հարաբերությունների սոցիալիստական էության դրսևորում։ Դրա ամրապնդումը և խորացումը, ազգերի ու ազգությունների կյանքի բոլոր ոլորտների, սովետական առանձին մարդկանց գիտակցության և վարքի վրա աճող ներգործությունը կոմունիստական կուսակցության գլխավոր հոգսերից մեկն է եղել ոչ միայն սոցիալիզմի շինարարության և ամրապնդման տարիներին, այլև այժմ՝ կոմունիստական հասարակության շինարարության փուլում։

Հասուն սոցիալիզմը բնութագրվում է Սովետական Միության բոլոր ազգերի և ազգությունների բազմակողմանի ծաղկմամբ, կենսագործունեության բոլոր ոլորտներում նրանց մերձեցման ծավալուն պրոցեսներով։ Մերձեցումն ընթանում է ազգային առանձնահատկությունների, յուրաքանչյուր ազգի, ինչպես և ամբողջ Միության շահերի ուշադիր հաշվառման պայմաններում։ Կոմունիստական շինարարության շրջանում մեր երկրի ժողովուրդների բարեկամությունը հասել է հասունության էլ ավելի բարձր աստիճանի։ Այն հենվում է հզոր, բարձր զարգացած տնտեսության, սովետական հասարակության գաղափարաքաղաքական միասնության և առաջավոր կուլտուրայի վրա։ Այժմ, երբ բարձր տեմպերով զարգանում են սոցիալիստական էկոնոմիկան և կուլտուրան, երբ հասարակական հարաբերություններն ապրում են կատարելագործման ակտիվ պրոցես՝ ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդման հարցերը, սովետական բոլոր մարդկանց ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելը ձեռք են բերում առանձնակի նշանակություն։

ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության կարևորագույն սկզբունքներից մեկն անընդհատ ամրապնդվող համագործակցությունն է՝ կոմունիզմի տնտեսական հիմքի կառուցման գործում։ Այն, ինչպես հայտնի է, արտահայտվում է քաղաքական հարաբերություններում, մասսաների գաղափարախոսության մեջ, հասարակական գիտակցության բարոյական հիմքերում, մարդկանց վարքի և գործունեության, նրանց կենցաղի և ապրելաձևի մեջ։ Ժողովուրդների բարեկամության հիմնական բովանդակությունը արտահայտվում է ազգերի և ազգությունների փոխհարաբերություններում։

Սովետական ժողովրդի՝ որպես ժողովուրդների բարեկամության պատմական նոր հանրության, կազմավորումով ավելի ևս ամրապնդվեց, մեծացավ նրա նշանակությունը հասուն սոցիալիզմից աստիճանաբար դեպի կոմունիզմ ընթանալու գործում։ Սովետական ժողովրդի ինտերնացիոնալ միասնությունը հնարավոր դարձավ միայն սոցիալիստական ազգային հարաբերությունների զարգացման այնպիսի աստիճանում, երբ՝ ա) ժողովուրդների բարեկամությունը ամրապնդվեց և ինտերնացիոնալիզմը վերածվեց աշխատավորների վարքի ու գործունեության նորմայի, անկախ ազգությունից. բ) որակական խոր փոփոխություններ կատարվեցին ոչ միայն ազգերի, ազգությունների փոխհարաբերություններում, այլև միջանհատական հարաբերություններում, անհատի ձևավորման ոլորտում։ գ) երբ՝ հասունացել և անընդհատ ամրանում են բոլոր ազգերի ու ազգությունների ընդհանուր գծերը, որոնցում կարևորագույն նշանակություն ունեն սոցիալիստական միասնական ապրելակերպը, սովետական մարդկանց ինտերնացիոնալ գիտակցությունը և համազգային հպարտությունը։

ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերում ընդգծվում է, որ մեր բազմազգ հայրենիքի բոլոր ժողովուրդների եղբայրական բարեկամությունն անշեղորեն ամրապնդվում է։ Կուսակցության գիծն ուղղված է յուրաքանչյուր հանրապետության նյութական և հոգևոր պոտենցիալի ավելացմանն ու միաժամանակ

դրա առավելագույն օգտագործման նպատակին՝ երկրի ընդհանուր ներդաշնակ զարգացման գործում։

ՍՄԿԿ XXVI համագումարը սահմանեց կյանքում կուսակցության ազգային քաղաքականության մարմնավորման նոր ոլորտներ, նշեց ազգերի ծաղկման և մերձեցման հետագա ուղիներ ու միջոցներ։ Համագումարում Լ. Ի. Բրեժնևը իր զեկուցման մեջ շեշտեց. «Մենք դեմ ենք այն միտումներին, որոնք նպատակ ունեն արհեստականորեն վերացնել ազգային առանձնահատկությունները։ Բայց մենք նույնքան էլ անթույլատրելի ենք համարում դրանց արհեստական ուռճացումը»[8]։ Սովետական եղբայրական ժողովուրդների ծաղկումն ու բարգավաճումը տեղի է ունենում հավասարության, եղբայրական համագործակցության և կամավորության հիման վրա։ Սոցիալիստական հասարակարգի առանձնահատկությունները, պետական միասնական սիստեմում ժողովուրդների զարգացումը հիմնականում նշանավորվում են ազգային և սոցիալական շահերի ընդհանրությամբ։ Շահերի ընդհանրությունն էլ պայմանավորում է սոցիալիստական հասարակության առաջընթացը։ Բայց ազգային շահերը ժողովուրդների զարգացման գործում դրսևորում են նաև ազգային յուրահատկությունների պահանջ։ Այդ պատճառով ՍՄԿԿ-ն, սովետական կառավարությունը իրենց խնդիրն են համարում՝ «առանձին ազգերի ու ազգությունների զարգացման առավել ճիշտ ուղիներ գտնելը և նրանցից յուրաքանչյուրի շահերը ամբողջությամբ վերցրած սովետական ժողովրդի ընդհանուր շահերի հետ առավել ճիշտ կերպով զուգորդելը»[9]։ Մեր ժամանակներում ևս արդիական է լենինյան այն թեզիսը, ըստ որի ազգային քաղաքականության մեջ պետք է ելնել ոչ թե վերացական սկզբունքներից, այլ ամենից առաջ ժողովուրդների պատմական կոնկրետ պայմանների հաշվառումից, և առաջին հերթին էկոնոմիկայից, որը և որոշում է ժողովուրդների սոցիալական կառուցվածքը։

Համաշխարհային ասպարեզում ժամանակակից գաղափարական պայքարի սրման պայմաններում կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը հատուկ ուշադրություն են հատկացնում աշխատավորների դաստիարակությանը՝ ժողովուրդների բարեկամության, սովետական հայրենասիրության և սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով։

Կոմունիստական կուսակցության և սովետական պետության կողմից ՍՍՀՄ-ում ազգային հարցի հաջող լուծումը, մեր կյանքում ժողովուրդների բարեկամության հաստատումն արժանանում է արտասահմանյան բարեկամների սեռեռուն ուշադրությանը։ Սոցիալիզմի հաղթանակը շատ երկրներում և համաշխարհային սոցիալիստական սիստեմի ստեղծումը համոզիչ վկայում են, որ ժողովուրդների բարեկամության գաղափարը, չնայած առանձին դրժվարություններին, հաջող է զարգանում նաև համաշխարհային մասշտաբով։ Դա սոցիալիստական շինարարության ընթացքում ժողովուրդների կյանքում օբյեկտիվ օրինաչափություն է։

ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունն ամրապնդվում է ամենից առաջ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համատեղ աշխատանքում։ Սոցիալ-տնտեսական և կուլտուրական հետամնացությունից դեպի հասուն սոցիալիզմի հասարակարգ՝ այդպիսին է այն պատմական ուղին, որ վեց տասնամյակում անցել են Սովետական Միության սոցիալիստական ազգերն ու ազգությունները։

Հասարակության զարգացման օրինաչափությունների իմացությունն ու օգտագործումն ապահովում են ՍՄԿԿ-ի հիրավի գիտական և ռեալիստական քաղաքականությունը։ ՍՄԿԿ XXVI համագումարը հաստատապես ցույց տվեց

---

8 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1981, էջ 93։

9 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 4, էջ 85—86։

կուսակցության հեղափոխական հավատարմությունը ինտերնացիոնալիզմին, լենինյան ազգային քաղաքականության անսասանությունը։

Իրագործելով հասուն սոցիալիստական հասարակության գիտական ղեկավարությունը, կուսակցությունն ազգային քաղաքականության գլխավոր ելակետը համարում է ՍՍՀՄ յուրաքանչյուր ազգի և ազգության շահերի լավագույն զուգակցումը սովետական ամբողջ ժողովրդի ընդհանուր շահերի հետ։ Իր գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը նա տեսնում է միացյալ ռեսուրսներն օգտագործելու, սոցիալիստական տնտեսության առավելությունները առավելագույն չափով իրացնելու մեջ։ Ընդ որում, կուսակցությունը ելնում է այն բանից, որ ՍՍՀՄ բոլոր ազգերի և ազգությունների տընտեսական կյանքի ընդհանրությունը բխում է հենց սովետական տնտեսության բնույթից։ Ազգերի ծաղկման և մերձեցման տնտեսական հիմքը սոցիալիստական ժողովրդական տնտեսության պլանային կարգի մեջ է։ Այն հնարավորություն է տալիս հանրապետությունների միջև աշխատանքի ռացիոնալ բաժանման համար զուգակցել նրանց տնտեսական զարգացումը և մասնագիտանալ այն ճյուղերով, որոնց համար կան առավել բարենպաստ պայմաններ։

Սովետական Միության տնտեսությունը տնտեսական միասնական մարմին է՝ կազմավորված բոլոր ազգերի և ազգությունների տնտեսական ընդհանուր նպատակների և շահերի հիմքի վրա։ Երկրի միասնական ժողովրդատընտեսական համալիրի պլանավորված զարգացման, մասնագիտացման և կոոպերացման բարձր մակարդակի շնորհիվ միութենական բոլոր հանրապետությունները ընթանում են սոցիալ-տնտեսական առաջադիմության անշեղ ուղիով։ Արդի պայմաններում նոր իմաստ է ստանում միութենական հանրապետությունների զարգացման մակարդակների հավասարեցման հարցը։ Եթե սոցիալիզմի կառուցման շրջանում խոսքը դրանց տեխնիկատնտեսական և կուլտուրական հետամնացության վերացման մասին էր, ապա այժմ, երբ այդ խընդիրը լուծված է, խոսքն ազգային հանրապետությունների և մարզերի մակարդակի հետագա մոտեցման և ներդաշնակ զարգացման, արտադրության ռացիոնալ մասնագիտացման մասին է՝ սովետական ամբողջ ժողովրդի շահերից ելնելով։ Այժմ պայմաններն այնպիսին են, երբ լայն մասշտաբով իրականանում է ժողովուրդների ավելի բազմազան փոխադարձ օգնությունը, և յուրաքանչյուր հանրապետություն ձգտում է առավելագույն ներդրում ունենալ կոմունիզմի կառուցման ընդհանուր գործում։ ՍՄԿԿ-ն ելնում է նրանից, որ տընտեսական զարգացման մերձեցման հետագա մակարդակը, միութենական յուրաքանչյուր հանրապետության բազմակողմանի առաջադիմությունը, կանխորոշում և ավելացնում է նրա ներդրումը Սովետական Միության տնտեսական հզորության մեջ։

ՍՍՀՄ-ի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը 1913—1979 թթ. ամբողջությամբ վերցրած աճել է 157 անգամ, այդ թվում Հայաստանում՝ 362, Բելոռուսիայում՝ 221, Ղազախստանում՝ 239, Մոլդավիայում՝ 282, Կիրգիզիայում՝ 347 անգամ[10]։ ՍՄԿԿ XXVI համագումարն արձանագրեց, որ հաջողությամբ է իրականանում տերիտորիալ-արտադրական խոշոր համալիրների ձևավորումն Ուրալում, Սիբիրում, Հեռավոր արևելքում, Ղազախստանում և Տաջիկստանում։ Երկրի հենց արևելյան շրջաններն էին, որ 10-րդ հնգամյակի տարիներին ապահովեցին նավթի, գազի և ածխի հանույթի համամիութենական աճը։ Սիբիրի և Հեռավոր արևելքի արագ յուրացման մեծ հնարավորություններ է ստեղծում Բայկալ-Ամուրյան մայրուղին։ ՍՄԿԿ XXVI համագումարը որոշեց արագացնել արևելյան շրջանների տնտեսական հնարավորությունների ավելացումը և ապահովել դրանց բնական ռեսուրսների յուրացման ուղղությամբ կատարվող մեծ աշխատանքները, վառելիքաէներգետիկ և հումքային բազաների զարգացումը։

Չի կարելի հաշվի չառնել ազգերի ու ազգությունների ծաղկման և մերձեցման վրա գիտատեխնիկական հեղափոխության հսկայական ազդեցությու-

---

10 «Народное хозяйство СССР в 1979 г.», М., 1980, с. 142.

նը։ Ազգային հարաբերությունների զարգացման վրա դրա ներգործությունը բազմապլան է։ Արագացնելով տեխնիկական առաջադիմությունը և միասնականացնելով արտադրական պրոցեսները, գիտատեխնիկական հեղափոխությունն ուժեղացնում է սոցիալիզմին հատուկ ինտեգրացիոն միտումները և դրանով իսկ ավելացնում տարբեր ազգությունների մարդկանց շփման հնարավորությունների զանազան ձևերը։ Նշված հարաբերության մեջ ուշագրավ է Ուկրաինական ՍՍՀ-ի օրինակը։ Աշխատանքի ներմիութենական բաժանման սիստեմում այդ հանրապետությունը ՍՍՀՄ-ի վառելիքաէներգետիկ, մետալուրգիական և մեքենաշինական, ինչպես և գյուղատնտեսական հիմնական բազաներից է։ Ուկրաինան արտադրում է Սովետական Միության արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի 1/6-ը։ Իրենց հերթին Ուկրաինա են բերվում նավթ և նավթամթերքներ, գունավոր մետաղներ, ապատիտներ, էներգետիկ և մեքենաշինական սարքավորումներ, անտառանյութ, գործվածքեղեն, թուղթ, բամբակ, ձկնեղեն և այլն։ Ուկրաինական ՍՍՀ-ի արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի մեջ կա միութենական բոլոր հանրապետությունների աշխատավորների աշխատանքի բաժինը։ Արտահայտելով ուկրաինական ժողովրդի նվիրական խոհերն ու զգացմունքները, Ուկրաինայի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Վ. Վ. Շչերբիցկին նշել է. «Իր սեփական բախտի օրինակով ուկրաինական ժողովուրդը այժմ... իր պատմության իսկական ոսկե դարաշրջանն ապրելով, ճանաչեց կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության ստեղծագործ մեծ ուժը, նրա պրոլետարական ինտերնացիոնալիզմը... Ուկրաինայի աշխատավորության համար բարձրագույն պարծանք է սովետական մեծ ժողովրդին պատկանելը։ Ուկրաինական ժողովուրդն իր ամենաարժեքավոր գանձի նման է պահպանում և ամրապնդում բարեկամությունը Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ, որի շնորհիվ հնարավոր դարձան մեր բոլոր պատմական ձեռքբերումները»[11]։

Տնտեսական և կուլտուրական իսկական ծաղկման շրջան են ապրում եղբայրական բոլոր հանրապետությունները։ Լայնորեն հայտնի են սոցիալ-տնտեսական վիթխարի փոփոխությունները Միջին Ասիայի հանրապետություններում, ժողովրդական տնտեսության զարգացման բարձր մակարդակն Անդրբրկովկասի և Մերձբալթիկայի հանրապետություններում, Բելոռուսիայում ու Մոլդավիայում։ Բարձր է Սովետական Միության բոլոր հանրապետությունների նյութական և հոգևոր պոտենցիալը. դրանցից յուրաքանչյուրի հնարավորություններն օգտագործվում են ամբողջ երկրի ներդաշնակ զարգացման համար, ծառայում են կոմունիստական շինարարության համաժողովրդական գործին։ Հանդիսանալով միասնական ժողովրդատնտեսական համալիրի անբաժան մասը, «յուրաքանչյուր հանրապետության էկոնոմիկան կարևոր տեղ է գրավում աշխատանքի հասարակական բաժանման մեջ, ավելի ու ավելի ծանրակշիռ ավանդ է մուծում երկրի ազգային հարստության մեջ»[12]։

Սովետական բոլոր հանրապետությունները լայնորեն մասնակցում են սոցիալիստական աշխատանքի համամիութենական բաժանմանը։ Օրեցօր ավելի բազմազան ու ամուր են դառնում եղբայրական հանրապետությունների տնտեսական կապերը։ Այսպես, օրինակ, Հայկական ՍՍՀ է ներմուծվում 100 տեսակի արտադրանք, իսկ 67-ն արտահանվում է միութենական հանրապետություններ[13]։ Սովետական Հայաստանը զբաղեցնում է ՍՍՀՄ տարածքի 0,13%-ը և ունի երկրի բնակչության 1,2%-ը, բայց արդյունաբերական արտադրանքի 15 տեսակի գծով նրա տեսակարար կշիռը կազմում է համամիու-

---

11 В. В. Щербицкий, Избранные речи и статьи, М., 1978, с. 206.

12 «Սովետական Հայաստան», 21. II. 1982։

13 «Вопросы экономики», 1980, № 11, с. 97.

թենական արտադրության 5-ից 15%-ը[14]։ Հանրապետության արդյունաբերության արագ զարգացման շնորհիվ աճել է արտադրանքի արտահանման ծավալը։ Հայաստանը մասնակից է 180 անուն այնպիսի ապրանքների արտադրության մեջ, որոնք արտահանվում են 80 արտասահմանյան երկիր[15]։ Սովետական Հայաստանի այսօրվա նվաճումներում իր կշռելի մասն ունի եղբայրական ժողովուրդների աշխատանքը։ Այդ օգնության ձևերն ամենաբազմաղան են. դա անհրաժեշտ նյութերի ու սարքավորումների մատակարարումն է, գիտատեխնիկական նվաճումների ու առաջավոր փորձի փոխանակումը, եղբայրական ժողովուրդների ներկայացուցիչների անմիջական մասնակցությունը ժողովրդատնտեսական կարևոր կառույցների շինարարությանը։ Հայկական ՍՍՀ-ն իր տնտեսության հաջող զարգացման համար եղբայրական հանրապետություններից ստանում է անհրաժեշտ ամեն բան։ Իրենց հերթին Հայաստանի աշխատավորները կշռելի ավանդ են ներդնում եղբայրական հանրապետությունների տնտեսության զարգացման գործում։ Դրանով նրանք կատարում են իրենց ինտերնացիոնալ բարձր պարտքը։

Սոցիալիստական շինարարության ծառայությանն են դրված Անդրկովկասի բոլոր հանրապետությունների բնական հարստությունները։ Այսպես, օրինակ, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի շատ տեսակներով Վրացական ՍՍՀ-ն այժմ երկրի տնտեսության մեջ առաջատար դիրք է գրավում։ Այն արդյունահանում է ՍՍՀՄ-ում մշակվող մանգանի հանքաքարի 28,5%-ը։ Վրացական հանրապետությանը բաժին է ընկնում երկրում բաց թողնվող մայրուղային էլեկտրաքարշերի 31, արտադրվող տունգի յուղի 100, թեյի 95%-ը։ Վրաստանն ապահովում է մրգերի և հատապտուղների համապետական ռնումների 11, խաղողի՝ 14, ցիտրուսների՝ 100%-ը և այլն[16]։ Ադրբեջանում նոր ձեռնարկությունների կառուցման, դրանց համար կադրերի պատրաստման, ալյումինի, պողպատի, գլանվածքի, կաուչուկի, ավտոդողերի և այլ արտադրանքի ստեղծման ու յուրացման գործում մեծ օգնություն ցույց տվեցին Մոսկվայի, Լենինգրադի և ՌՍՖՍՀ-ի շատ երկրամասերի ու մարզերի, Ուկրաինայի և Բելոռուսիայի, Վրաստանի, Հայաստանի և միութենական այլ հանրապետությունների ձեռնարկությունները։ Իրենց հերթին Ադրբեջանի բանվոր դասակարգի, գիտնականների, ինժեներների և տեխնիկների ոչ քիչ ներկայացուցիչներ էին այն մարդկանց մեջ, ովքեր յուրացնում էին Թաթարիայի, Արևմտյան Սիբիրի, Միջին Ասիայի և Ղազախստանի նավթի նոր հանքավայրերը։ Ուժեղացել է Ադրբեջանի դերը, նրա մասնակցությունը ՍՍՀՄ արտաքին տնտեսական կապերում։ Սովետական Ադրբեջանից արդյունաբերական արտադրանքի 350 տեսակ է արտահանվում աշխարհի 65 երկիր[17]։

Աշխատանքի համամիութենական բաժանման մեջ ակտիվ մասնակցություն ունի Բելոռուսիայի տնտեսությունը։ «Ձեռնարկություններից յուրաքանչյուրը, որը որոշում է Սովետական Բելոռուսիայի արդյունաբերական տեսքը,— գրել է Պ. Մ. Մաշերովը,— կարող է իրավամբ անվանվել ժողովուրդների մեծ եղբայրության մանկիկը, քանի որ գրանցում մարմնավորված են բոլոր հանրապետությունների աշխատավորների աշխատանքն ու տաղանդը, գիտելիքներն ու փորձը»[18]։ Աշխատանքի հասարակական բաժանման մեջ իր մասնագիտացմանը համապատասխան Բելոռուսիան արտադրում է կալիումային պարարտանյութերի համարյա ամեն 2-րդ տոննան, 6-րդ տրակտորը և 7-րդ մետաղահատ հաստոցը, քիմիական մանրաթելի 5-րդ տոննան ու 10-րդ սառնարանը, 5-րդ մոտոցիկլը և 7-րդ ձեռքի ժամացույցը։ Այն տալիս է նաև կարտոֆիլի 7 և վուշամանրաթելի 24%-ը։ Մեկ շնչին ընկնող ազգային եկամուտի

---

14 А. А. Аракелян, Экономическое сотрудничество народов СССР, Ереван, 1977, с. 30.

15 «Սովետական Հայաստան», 29. XI. 1980։

16 «Заря Востока», 25. II. 1982.

17 Г. А. Алиев, Советский Азербайджан, М., 1981, с. 48.

18 П. М. Машеров, Советская Белоруссия, М., 1980, с. 18.

և արդյունաբերական արտադրանքի արտադրությամբ Բելոռուսիայի բնակչությունը գերազանցել է միջին միութենական մակարդակը[19]։

Ինտերնացիոնալացումը սովետական տնտեսության կենդանի ոգին է։ Սովետական ժողովրդի սոցիալական հարուստ պրակտիկան ավելի ևս համոզում է, որ ինտերնացիոնալիզմն օրգանապես հատուկ է սոցիալիստական հասարակարգին. այն յուրաքանչյուր ժողովրդի և ամբողջությամբ վերցրած Միության ստեղծագործ ուժերի անսպառ աղբյուրն է։ Ինտերնացիոնալիզմի հրաշալի ավանդույթները ներծծվել են սովետական մարդկանց միս ու արյան մեջ, դարձել նրանց կենցաղի սոցիալական և բարոյական նորման, սոցիալիստական ազգերի ծաղկման ու մերձեցման մշտապես կենսունակ գործոնը։

Մեր երկրի սոցիալիստական ազգերի և ժողովուրդների եղբայրական փոխօգնությունը հենց կյանքից ծնված օբյեկտիվ, օրինաչափ երևույթ է։ Ժողովուրդների ինտերնացիոնալ դաստիարակության և բարեկամության իսկական դպրոց էին Վոլգայի, Դնեպրի և Սիբիրի մեծ գետերի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանները։ Սովետական ժողովուրդների բարեկամության վեհ հուշարձան դարձավ երկրաշարժից հետո վերածնված Տաշքենդը։ Բազմազգ կոլեկտիվներ կառուցեցին «Կամազն» ու «Ատոմմաշը», յուրացրին ղազախական խոպանն ու այսօր էլ յուրացնում են ռուսական ոչ-սևահողերը, կառուցում են Սիբիրի արտադրական-էներգետիկ համալիրները, Բամ-ի ճանապարհը, գերհեռավոր գազանավթամուղեր ու ռոռգիչ համակարգեր, ստեղծում են միասնական էլեկտրասիստեմ։ Միայն Սովետական Հայաստանի տարածքում բոլոր հանրապետությունների ներկայացուցիչների եղբայրական օգնությամբ կառուցվել է Հայկական ատոմակայանը, Արփա-Սևան 48 կիլոմետրանոց եզակի թունելը, Երևանի մետրոպոլիտենը, Իջևան-Հրազդան երկաթուղին և այլ կառույցներ։

Ժողովուրդների բարեկամությունը վառ ի հայտ է գալիս հանրապետությունների, մարզերի, քաղաքների, ձեռնարկությունների մրցությունում, որի շնորհիվ կողմերից յուրաքանչյուրը հարստանում է կոմունիստական շինարարության փորձով։ Մրցությունները նպաստում են ստեղծագործական նախաձեռնությունների զարգացմանը, ուժերի և միջոցների մոբիլիզացմանը՝ ժողովրդատնտեսական պլանների ժամկետից շուտ կատարման գործում։ Սոցիալիստական ազգերի շահերի ընդհանրությունն իր հետ բերում է դրական փորձը կիսելու բնական անհրաժեշտություն։ Մրցության ընթացքում ավելի է ամրապնդվում ու կուտակվում ժողովուրդների բարեկամությունը, ուժեղանում աշխատավորների ինտերնացիոնալ միասնությունը։ Այսպես. Ուկրաինական ՍՍՀ-ի բոլոր 25 մարդերը, 33 քաղաքները, 250 քաղաքային և գյուղական շրջանները մրցում են ՌՍՖՍՀ-ի, Ուզբեկստանի, Հայաստանի, Էստոնիայի, Բելոռուսիայի, Վրաստանի, Մոլդավիայի և մյուս հանրապետությունների աշխատավորական կոլեկտիվների հետ[20]։

Սոցիալիստական մրցության կազմակերպման և ղեկավարման ուղղությամբ մեծ փորձ են կուտակել Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները։ Ավանդական են դարձել մրցությունները անդրկովկասյան հանրապետությունների մայրաքաղաքների, ինչպես և Դոնի Ռոստովի ու Կիևի միջև։ Եղբայրական մեծ բարեկամություն է հաստատվել Ռուսթավիի, Սումգայիթի, Կիրովականի և Բուքախսի մրցող ձեռնարկությունների միջև։ Արդեն երկար տարիներ է, ինչ Հայկական ՍՍՀ Մեղրու, Շամշադինի, Իջևանի շրջանները մրցում են Ադրբեջանական ՍՍՀ՝ Օրդուբադի, Թովուզի, Ղազախի շրջանների, իսկ Հայաստանի Հոկտեմբերյանի, Արթիկի և Նոյեմբերյանի շրջանները՝ Վրացական ՍՍՀ-ի Մախարաձեի և Ախալքալաքի շրջանների հետ։

Մրցության շնորհիվ բազմաթիվ փառավոր գործեր ու հրաշալի նախաձեռնություններ են ծնվել միութենական հանրապետությունների աշխատա-

---

19 Նույն տեղում։

20 «Вопросы истории КПСС», 1982, № 1, с. 12.

գործերի կյանքում։ Ընկերական փոխօգնությունը, առաջավոր փորձի փոխանակումը, սոցիալիստական մրցության արդյունքների ամփոփումը նպաստում են աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակմանը։ Սոցմրցության հաշողությունները մեծապես յուրաքանչյուր հանրապետության կուսակցական կազմակերպության կազմակերպական և դաստիարակչական աշխատանքների արդյունքն են։ Սոցիալիստական մրցությունը դարձել է տնտեսական և սոցիալական առաջընթացի հզոր լծակ, մեր հայրենիքի ժողովուրդների եղբայրական փոխօգնության, ինտերնացիոնալ դաստիարակության իսկական դպրոց։

Ազգայինի և ինտերնացիոնալի դիալեկտիկան, դրանց հարաբերակցության փոփոխությունը մշտապես գտնվում են կուսակցության տեսական ու պրակտիկ գործունեության ուշադրության կենտրոնում։ ՍՄԿԿ XXVI համագումարը ուշադրության առավ բուն ազգության որակյալ բանվորների պատրաստման մասշտաբների ավելացման անհրաժեշտությունն այն հանրապետություններում, որտեղ ավելի արդյունավետ են զարգանում ժողովրդագրական պրոցեսները և կա աշխատանքային ռեսուրսների ավելցուկ՝ հատկապես գյուղական երիտասարդության հաշվին։ Համագումարը նշեց նաև միութենական և ինքնավար հանրապետությունների ոչ բնիկ ազգաբնակչության պահանջմունքների բավարարման նկատմամբ ուշադրության մեծացման անհրաժեշտությունը։ Այժմ տարբեր ազգերի և ազգությունների մոտ 59 մլն ներկայացուցիչներ, որոնք ունեն ազգային պետականության այս կամ այն ձևը, ապրում են նրա սահմաններից դուրս։ Դա նշանակում է, որ ՍՍՀՄ բնակչության ավելի քան 1/5-րդ մասն ապրում և աշխատում է այլազգի միջավայրում։

Ազգային հարաբերությունների ոլորտում օբյեկտիվ պրոցեսների հիման վրա ամրապնդվում է կուսակցական կազմակերպությունների ինտերնացիոնալ բաղադրությունը, ընդարձակվում է դրանց ազգային կազմը, և, միաժամանակ, աճում է բուն ազգությունների կոմունիստների թիվը։ ՍՄԿԿ-ն, որն իր շարքերում ընդգրկում է 17,5 մլն մարդ, միավորում է ավելի քան 100 ազգերի ու ազգությունների առաջավոր ներկայացուցիչների, որոնց շարքում ռուսները կազմում են 60, ուկրաինացիները՝ 16,7, բելոռուսները՝ 3,7, ուզբեկները՝ 2,3, ղազախները՝ 1,9, վրացիները՝ 1,7, ադրբեջանցիները՝ 1,6, հայերը՝ 1,5 լիտվացիները՝ 0,7, մոլդավացիները՝ 0,5, լատիշները, կիրգիզները, տաջիկները, թուրքմենները՝ յուրաքանչյուրը 0,4, էստոնացիները՝ 0,3, այլ ազգությունները՝ 8,2%[21]։

ՍՄԿԿ XXVI համագումարը կատարեց սովետական հասարակության մեջ սոցիալական վերափոխումների, բոլոր դասակարգերի և սոցիալական խմբերի մերձեցման անշեղ ընթացքի վերլուծությունը։ Համագումարի եզրակացությունն այն է, որ սովետական հասարակության անդասակարգ կառուցվածքը գլխավորապես և հիմնավորապես կձևավորվի հասուն սոցիալիզմի պատմական շրջանակներում, որի առաջատար ուժը եղել է և կմնա քանակապես անընդհատ աճող բանվոր դասակարգը։

Այժմ երկրում կա մոտ 80 մլն բանվոր՝ զբաղված բնակչության 2/3-ը։ Սովետական հանրապետությունների սոցիալական կառուցվածքի հավասարեցումն առաջին հերթին արտահայտվում է բանվոր դասակարգի արագ աճով այնտեղ, որտեղ նախկինում բանվորների տեսակարար կշիռը բնակչության կազմում ցածր է եղել։ Եթե ամբողջ Միությունում բանվորների քանակը 1924—1980 թթ. մեծացել է 14,2 անգամ, ապա Ուզբեկական ՍՍՀ-ում՝ 37,6, Ղազախական ՍՍՀ-ում՝ 37, Կիրգիզական ՍՍՀ-ում՝ 45,5, Տաջիկական ՍՍՀ-ում՝ 46,4 անգամ[22]։ Եթե Հայկական ՍՍՀ-ում 1922 թ. հաշվվում էր ընդամենը 20,6 հազար բանվոր, ապա 1978 թ.՝ 800 հազար[23]։ Բանվոր դասակարգը Սովետական Միության բոլոր ազգերի և ազգությունների մերձեցման գործում խաղում է որոշիչ դեր, անմիջականորեն ազդում ազգամիջյան համախմբման

---

21 «Партийная жизнь», 1981, № 14, с. 18.

22 «Вопросы истории КПСС», 1982, № 1, с. 13.

23 «Коммунист» (Ереван), 15. X. 1978.

էության, ձևերի և մեթոդների վրա։ Այն հասարակության առաջընթացի հիմնական կրողն է, ՍՍՀՄ ազգերի և ազգությունների քաղաքական համախմբվածության և գաղափարական միասնության միջուկը։

Սովետական հասարակության հետագա համախմբվածությանն ակտիվորեն նպաստում են բնակչության միգրացիան և մասնագետ-կադրերի փոխանակումը, բազմազգ աշխատավորական կոլեկտիվների կազմավորումը, ազգամիջյան ամուսնությունների քանակի աճը, սովետական դեմոկրատիայի զարգացումը և խորացումը, որը երաշխավորում է ՍՍՀՄ բոլոր քաղաքացիների համար հավասար իրավունքներ՝ անկախ նրանց ազգությունից և այլն։ «Հոգևոր կյանքի ինտերնացիոնալացման հարցերի լուսաբանմանը,— գրում է ակադեմիկոս Պ. Ֆեդոսեևը,— մենք պետք է մոտենանք առանձնակի լրջությամբ, թույլ չտալով շտապողականություն մեր նախատեսություններում և կանխագուշակումներում։ Խոսքը վերաբերում է ոչ թե ազգային տարբերությունների վերացմանը, այլ նախ և առաջ ժողովուրդների եղբայրական համագործակցության հիման վրա փաստացի հավասարության հասնելուն։ Սոցիալիզմի պատմական մեծ նվաճումը նրանց կրթության և կուլտուրական զարգացման մակարդակների հավասարեցումն է, բոլոր հանրապետություններում գիտական հզոր պոտենցիալի ստեղծումը, ազգային ստեղծագործ կադրերի աճեցումը, ազգային գրականության և արվեստի ծաղկումը՝ սոցիալիստական ռեալիզմի ընդհանուր մեթոդի հիման վրա։

Ազգայինի և ինտերնացիոնալիստականի ճիշտ զուգակցման հարցը չի կորցնի իր իմաստը, քանի կան ազգային տարբերություններ, իսկ դրանք, ինչպես ասել է Լենինը, դեռ երկար կմնան անգամ համաշխարհային մասշտաբով կոմունիզմի հաղթանակից հետո»[24]։

Ազգամիջյան լեզուն պատմական անհրաժեշտություն է բազմազգ սոցիալիստական հասարակության մեջ։ Այն առաջադիմական դեր է խաղում ժողովուրդների համագործակցության և փոխօգնության կարգավորման, երկրի ժողովուրդների հոգևոր աճի ու համախմբվածության գործում։ Ժողովուրդների բարեկամության գաղափարի հաղթանակի և նրանց փոխադարձ վստահության աճի պայմաններում պարզվեց, որ ռուսաց լեզուն առավել հարմար է որպես ազգամիջյան լեզու։ Այն ՍՍՀՄ բնակչության կեսից ավելիի մայրենի լեզուն է։ «...դեմոկրատական պետության քաղաքակիրթ քաղաքացիները,— գրել է Վ. Ի. Լենինը դեռ 1913 թ.,— իրենք են նախապատվություն տալիս մեծամասնությանը հասկանալի լեզվին»[25]։ ՍՍՀՄ-ում միասնական ազգամիջյան լեզվի պրոբլեմի հաջող լուծումը պայմանավորված է նախ և առաջ սովետական հասարակարգի հետևողական դեմոկրատիզմով։ Սոցիալիզմի պայմաններում ռուսաց լեզվի տարածումը տեղի ունեցավ ոչ թե այն հակադրելով ազգային լեզուներին, այլ ազգային լեզուների բեղմնավոր զարգացման ընթացքով։ Ղեկավարվելով ազգային քաղաքականության լենինյան սկզբունքներով և ելնելով սոցիալիստական դեմոկրատիայի դրույթներից, ՍՄԿԿ Ծրագրում արձանագրված է. «Հետագայում ևս ապահովել ՍՍՀՄ ժողովուրդների լեզուների ազատ զարգացումը, ՍՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու համար ապահովել լիակատար ազատություն՝ խոսելու, իր երեխաներին դաստիարակելու և ուսման տալու ցանկացած լեզվով, թույլ չտալով ոչ մի արտոնություն, սահմանափակում կամ հարկադրանք այս կամ այն լեզվի գործածության հարցում»[26]։

Կոմունիզմի կառուցման ժամանակ բացարձակ կարևոր նշանակություն է ձեռք բերում աշխատավորների դաստիարակումը ժողովուրդների բարեկամության, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի և սովետական հայրենասիրության ոգով։ Ղեկավարվելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի լենին-

---

[24] П. Н. Федосеев, Интернациональное и национальное в социалистическом образе жизни («Вопросы философии», 1981, № 12, с. 30).

[25] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 23, էջ 519։

[26] «ՍՄԿԿ Ծրագիրը և կանոնադրությունը», Երևան, 1964, էջ 140։

յան սկզբունքներով և հաշվի առնելով սոցիալիստական ազգերի զարգացման օբյեկտիվ միտումները, կոմունիստական կուսակցությունը մշտական հոգատարություն է ցուցաբերում աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության մասշտաբների ընդլայնման, ձևերի, մեթոդների և բովանդակության խորացման ուղղությամբ։

ՍՍՀՄ-ի զարգացման ժամանակակից փուլում տեղի է ունենում ժողովուրդների սերտ մերձեցում, նրանց բարեկամության և եղբայրության, միասնության ու համախմբվածության անքակտելի կապերի ամրապնդում։ Սոցիալիզմի հաղթանակը դասակարգային հիմքերից զրկեց նացիոնալիզմը և շովինիզմը, բայց նախապաշարմունքները դեռ պահպանվում են։

Բացահայտելով դեպի կոմունիզմ ազգությունների շարժման հետագա օրինաչափությունները, կուսակցությունն իր ծրագրում հռչակել է, որ ազգային փոխհարաբերությունների բոլոր հարցերը՝ փնված կոմունիստական շինարարության ընթացքում, լուծվում են պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից, լենինյան ազգային քաղաքականության անշեղ կենսագործման հիմքի վրա։

Ազգային շինարարության արմատական պրոբլեմներից մեկը ինտերնացիոնալ-ընդհանուրի և ազգային-յուրահատուկի ճիշտ զուգակցման հարցն է։ Ազգայինի և ինտերնացիոնալի զուգակցումը բարդ ու բազմազան պրոցես է։ Սոցիալիզմի ժամանակ ազգային հարաբերությունների զարգացման ընթացքում ոչնչանում և վերանում է այն, ինչն արգելակում է ազգությունների առաջընթացը, իսկ առաջադեմը, արժեքավորը պահպանվում է, զարգանում, ներթափանցում մյուս ժողովուրդների կյանքը, դառնում ընդհանուրի սեփականություն։ ՍՍՀՄ ժողովուրդներից յուրաքանչյուրի մշակույթը յուրացնում է այն ամենալավը, ինչ ստեղծել են մեր երկրի մյուս ազգային մշակույթները։ «Սոցիալիստական կուլտուրան,— նշել է կիրգիզ գրող Չ. Այթմատովը,— վիթխարի խնայատուփն է այն ամենի, ինչ նվաճել, կուտակել և ստեղծում են բոլոր մեծ ու փոքր ազգերը, բոլոր ազգային կուլտուրաները։ Լինելով արտահայտման ձևով տարբեր, մենք միասնական ենք գլխավորում՝ գրականության մեջ և արվեստում հավատարիմ ենք կուսակցականության ու ժողովրդայնության լենինյան սկզբունքներին»[27]։ Վ. Ի. Լենինն ընդգծել է, որ ինտերնացիոնալ .չի նշանակում հակաազգային[28], քանի որ ինտերնացիոնալը պարունակում է այն ամենալավը և արժեքավորը, որ կա ազգայինի մեջ՝ ազգային կուլտուրաներում, բնավորություններում, լեզուներում։

Ինտերնացիոնալիզմի և բարեկամության ոգով ժողովուրդների դաստիարակությունը երկարատև ու բարդ պրոցես է։ Այն կենսագործվում է կոմունիստական կուսակցության և սովետական պետության գիտակից և պլանավորված գործունեությամբ։ Ինտերնացիոնալ դաստիարակության ոլորտում կուսակցության գործունեությունը իր մեջ ընդգրկում է այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են մարքսիզմ-լենինիզմի լայն պրոպագանդան որպես ինտերնացիոնալ դաստիարակության գաղափարական հիմք, պայքար հանուն տեղայնական միտումների մնացուկների հաղթահարման, կուսակցության և ժողովրդի դաստիարակումն հեղափոխական, ինտերնացիոնալ և աշխատանքային ավանդույթներով, ժողովուրդների բարեկամության և սոցիալիստական ինտերնացիոնալիզմի լենինյան գաղափարների ոգով։ Աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակման հզոր ուժ են նաև սոցիալիստական կուլտուրան, գրականությունը և ՍՍՀՄ ժողովուրդների արվեստը։ Ժողովուրդների բարեկամության թեման սովետական գրողների, կոմպոզիտորների, նկարիչների, թատրոնի ու կինոյի գործիչների և արվեստի այլ ձևերի ազնիվ թեմաներից է։ Սոցիալիստական ինտերնացիոնալիզմի գաղափարների պրոպագանդայի, եղբայրական ժողովուրդների կյանքի և աշխատանքի լուսա-

---

27 «Идеи Ленина—источник вдохновения» (материалы объединенного пленума правления творческих союзов СССР), М., 1970, с. 120.

28 Վ. Ի. Լենին, նշված, հ. 26, էջ 342։

բանման, սոցիալիստական ազգերի ու նրանց մշակույթի համագործակցության գործում առանձնահատուկ տեղ ունեն մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը։

ՍՍՀՄ պատմությունը ժողովուրդների միջև նախկինում չտեսնված բարեկամական և եղբայրական հարաբերությունների ծաղկման ու զարգացման վառ ժամանակագրություն է, սովետական ժողովրդի, սովետական մարդկանց սկզբունքայնորեն նոր սոցիալական ու ինտերնացիոնալ ընդհանրության ձևավորման տարեգրություն։ Այն ազգային հարցի պրակտիկ լուծման իսկական լաբորատորիա է, մեր երկրում ապրող ազգերի ու ազգությունների համար սոցիալիստական հեղափոխությամբ բացված տնտեսական, քաղաքական, կուլտուրական ծաղկման և բազմակողմանի մերձեցման դարաշրջան է։

Սովետական Միությունն իր 60-ամյակը դիմավորում է ուժերի և հզորության ծաղկման շրջանում, ամբողջ աշխարհին համոզիչ ցուցադրելով ՍՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության ուժն ու կենսունակությունը, ժողովուրդների բարեկամության ու եղբայրության գաղափարների հաղթանակը, նրանց միասնական աշխատանքի նշանակությունը յուրաքանչյուրի բազմակողմանի զարգացման, տնտեսական ու հոգևոր հնարավորությունների աճի, երկրի պաշտպանական հզորության ամրապնդման գործում։

БРАТСКАЯ ДРУЖБА НАРОДОВ СССР

АРТЕМ ЦАТУРОВ

Резюме

Советский Союз идет навстречу своему 60-летию в расцвете сил и могущества, убедительно демонстрируя перед всем миром силу и жизненность ленинской национальной политики КПСС, торжество идей дружбы и братства народов.

В развитом социалистическом обществе дружба народов СССР достигла высокой ступени зрелости, она опирается на могучую высокоразвитую экономику, идейно-политическое единство советского общества, передовую культуру. Она зиждется на добровольном и братском сотрудничестве социалистических наций и народностей, на равноправии, общности целей и интересов, преданности идеалам коммунизма. Дружба советских народов является также результатом огромной организаторской и воспитательной деятельности КПСС по преодолению всех препятствий на пути братских взаимоотношений народов, интернационального воспитания трудящихся.

С образованием советского народа как новой исторической общности дружба народов еще более окрепла, возросла ее значимость в обеспечении постепенного перерастания зрелого социализма в коммунизм.